ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ   ԹԻՎ 566

17 սեպտեմբերի 2018թ.   ք.Էջմիածին

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Արևաշատ գյուղի, Երևանյան խճուղու թիվ 3 տան բնակիչ Հրաչյա Բենիկի Կարապետյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք սեփականության վկայական թիվ 13102016-04-0022 տրված 13.10.2016թ./ Էջմիածին քաղաքի, Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 28 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 598քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սպարապետ Վազգեն Սարգսյան փողոցի թիվ 28 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 598քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել խառը կառուցապատման:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ   Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 567

17 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արմավիրի մարզի Ծաղկունք գյուղի, Սայաթ Նովա փողոցի թիվ 9 տան բնակիչ Արշակ Նորայրի Խուդոյանը դիմել է էջմիածնի քաղաքապետարան իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք սեփականության վկայական թիվ 11122017-04-0033 տրված 11.12.2017թ./ էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 21 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 340քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման 24-րդ կետի 3-րդ ենթակետով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Բաղրամյան փողոցի թիվ 21 հասցեում գտնվող բնակելի տան զբաղեցրած 340քմ մակերեսով բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի գործառնական նշանակությունը փոփոխել խառը կառուցապատման:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 570

18 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 26.07.2018Թ. ԹԻՎ 428 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքապետի 26.07.2018թ. «Անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին» թիվ 428 որոշման մեջ կատարել փոփոխություն.

. Որոշման առաջին կետի «Էջմիածին քաղաքում գտնվող, Կամո Հայրապետյանին պատկանող /համասեփ. Սարգիս, Կարապետ, Գրիգոր Հայրապետյաններ/ շինությանը տրամադրել հասցե «Էջմիածին-Մարգարա» բառերի փոխարեն կարդալ «Զվարթնոց-Մարգարա» բառերը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 571

« 19 » սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

# ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 4/6 վարչական գործը՝ գույքահարկի և հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու պահանջի մասին, պարզեց որ, քաղաքացի Արամ Ստեփանի Սահակյանը /գրանցման հասցե՝ ք.Էջմիածին Սուրբ Մեսրոպ Մաշտոց փող. 69/9, փաստացի բնակության հասցե՝ ք.Էջմիածին Ա.Մանուկյան փող. 16 տուն, անձնագիր AM0240350/, հանդիսանալով գույքահարկ և հողի հարկի վճարող սուբյեկտ, <<Գույքահարկի մասին>> և <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքներով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 13.07.2018թ. տեղեկանքների հիման վրա 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համանքապետարանի հարկային պարտավորությունների և պարտադիր վճարումների իրավախախտումների դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, գույքահարկի և հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով հրավիրել և անցկացրել է լսում Արամ Ստեփանի Սահակյանի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ա) Համաձայն գույքհարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿ-ի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի՝ քննարկվող ք.Էջմիածին, Ա.Մանուկյան փողոցի թիվ 16 հասցեում գտնվող անշարժ գույքը /այսուհետ՝ Գույք/, հանդիսանում է քաղաքացի Արամ Սահակյանի սեփականությունը, ինչը <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի վճարման ենթակա գույքահարկը 2013-2017թթ. ընկած ժամանակահատվածի համար կազմում է 439 688 /չորս հարյուր երեսունինը հազար վեց հարյուր ութսունութ/ ՀՀ դրամ, որը չի վճարվել:

Քաղաքացի Արամ Սահակյանի՝ նշված ժամանակահատվածների համար գույքահարկը վճարելու պարտականությունը կազմում է 297 936 /երկու հարյուր իննսունյոթ հազար ինը հարյուր երեսունվեց/ ՀՀ

դրամ՝ ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ **141 752 /մեկ հարյուր քառասունմեկ հազար յոթ հարյուր հիսուներկու/ ՀՀ** դրամի չափով:

բ) Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿՊ կոմիտեի աշխատակազմի հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակից քաղվածքի՝ ք.Էջմիածին, Ա. Մանուկյան 16 հասցեում գտնվող 0,0477հա ոչ գյուղ.նշանակության հողամասը հանդիսանում է քաղաքացի Արամ Սահակյանի սեփականությունը, ինչը <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի վճարման ենթակա հարկը 2013-2017թթ. ընկած ժամանակահատվածի համար կազմում է **21 721 /քսանմեկ հազար յոթ հարյուր քսանմեկ/ ՀՀ** դրամ, որը չի վճարվել:

Քաղաքացի Արամ Սահակյանի՝ նշված ժամանակահատվածի համար հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է **14 895 /տասնչորս հազար ութ հարյուր իննսունհինգ/ ՀՀ** դրամ՝ ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ **6 826 /վեց հազար ութ հարյուր քսանվեց/ ՀՀ** դրամի չափով:

2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի օգոստոսի 31-ին հրավիրվել էին վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք փոստային անդորրագիր AG 010428995AM/ քաղաքացի Արամ Սահակյանը:

Վերջինս չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պատշաճ ծանուցման վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ութերորդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

**խտրականության բացակայություն՝** հարկերի ու վճարների կիրառությունը և հարկային վարչարարությունը չպետք է ունենան խտրական բնույթ՝ կախված սոցիալական, քաղաքական, կրոնական, էթնիկական, գաղափարական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված այլ գործոններից.

**համապարտադիրություն՝** բոլոր հարկ վճարողները պարտավոր են Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում, կարգով և չափով հաշվարկել և վճարել հարկեր ու վճարներ.

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները :

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում, տվյալ դեպքում Էջմիածին քաղաքային համայնքի բյուջե, մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված է, որ համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար` հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար` գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի` հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի` գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի` հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3րդ և 4-րդ կետերի` Էջմիածնի համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ ենթակետի՝ համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով` օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

ՀՀ Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 14 կետի համաձայն, որպես **լիազոր մարմին՝** օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ու սահմաններում վարչարարություն կամ հսկողություն իրականացնող՝ հանդես է գալիս պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը.

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Օրենսգրքի 400-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հարկային իրավախախտման համար կիրառվող հարկային պատասխանատվության տեսակներից է տույժը:.

Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը

սահմանված ժամկետում չվճարելու կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, <<Հողի Հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-2-րդ, ՀՀ Հարկային օրենսգրքի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Արամ Ստեփանի Սահակյանից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել 461 409 /չորս հարյուր վաթսունմեկ հազար չորս հարյուր ինը/ ՀՀ դրամ, որպես հողի հարկի և գույքահարկի համար վճարման ենթակա գումար որից՝ գույքահարկ 439 688 /չորս հարյուր երեսունինը հազար վեց հարյուր ութսունութ/ ՀՀ դրամ և հողի հարկ 21 721 /քսանմեկ հազար յոթ հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Էջմիածնի համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ քաղաքապետարանի տեղեկագրում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ 572

<< 19 >> սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 4/1 վարչական գործը՝ գույքահարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու պահանջի մասին, պարզեց որ ք. Էջմիածին, Անդրանիկ փ. 165 հասցեում բնակվող քաղաքացիներ Միշա Սուրենի Օհանյանը /անձ. AN0234466/, Քնարիկ Օհանյանը /անձ.______________/, Վաչագան Օհանյանը /անձ.______________/, Գոհարիկ Օհանյանը /անձ.______________/, Հովհաննես Օհանյանը /անձ.______________/, Սարգիս Օհանյանը /անձ.______________/, Սուրեն Օհանյանը /անձ. AN0234466/ հանդիսանալով գույքահարկ վճարող սուբյեկտներ, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով չեն կատարել գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 12.07.2018թ. տեղեկանքների հիման վրա 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համանքապետարանի հարկային պարտավորությունների և պարտադիր վճարումների իրավախախտումների դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով հրավիրել և անցկացրել է լսում Սուրեն Օհանյանի մասնակցությամբ:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

Համաձայն գույքհարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿ-ի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի՝ քննարկվող ք.Էջմիածին, Անդրանիկ փ. 165 հասցեում գտնվող անշարժ գույքը /այսուհետ՝ Գույք/, հանդիսանում է քաղաքացիներ Միշա Սուրենի Օհանյանի, Քնարիկ Օհանյանի, Վաչագան Օհանյանի, Գոհարիկ Օհանյանի, Հովհաննես Օհանյանի, Սարգիս Օհանյանի, Սուրեն Օհանյանի համատեղ սեփականությունը, ինչը <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի վճարման ենթակա գույքահարկը 2013-2017թթ. ընկած ժամանակահատվածի համար կազմում է **214 627 /երկու հարյուր տասնչորս հազար վեց հարյուր քսանյոթ/** ՀՀ դրամ, որը չի վճարվել:

Վերը նշված քաղաքացիների՝ 2015-2017թթ. համար գույքահարկը վճարելու պարտականությունը կազմում է **111 739 /հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր երեսունինը/ ՀՀ դրամ**՝ ապառք, որը օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու արդյունքում հաշվարկվել են տույժեր, 2013-2017թթ-ի համար **102 888 /հարյուր երկու հազար ութ հարյուր ութսունութ/** ՀՀ դրամ չափով:

2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի օգոստոսի 31-ին հրավիրվել էին վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել էին /հիմք փոստային անդորրագիր AG 010435545AM/ քաղաքացիներ Միշա Սուրենի Օհանյանը, Քնարիկ Օհանյանը, Վաչագան Օհանյանը, Գոհարիկ Օհանյանը, Հովհաննես Օհանյանը, Սարգիս Օհանյանը, Սուրեն Օհանյանը:

Միշա Սուրենի Օհանյանը, Քնարիկ Օհանյանը, Վաչագան Օհանյանը, Գոհարիկ Օհանյանը, Հովհաննես Օհանյանը, Սարգիս Օհանյանը չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ

օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պատշաճ ծանուցման վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին **չներկայացան** վարչական վարույթի լսումներին:

Լսումներին ներկայացավ Սուրեն Օհանյանը և հայտարարեց, որ կներկայացնի տեղեկանք ՀՀ ԿԱ ԱԳԿ-ին տեսչությունից գույքի գնահատման վերաբերյալ, քանի որ համաձայն չէ գույքի գնահատման և դրա հետևանքով հաշվարկված գույքահարկի չափի հետ: Սակայն հետագայում ներկայացված տեղեկանքը չազդեց գույքի գնահատման վրա և հետևաբար գույքահարկի վերահաշվարկ չկատարվեց:

**Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ութերորդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

**խտրականության բացակայություն**՝ հարկերի ու վճարների կիրառությունը և հարկային վարչարարությունը չպետք է ունենան խտրական բնույթ՝ կախված սոցիալական, քաղաքական, կրոնական, էթնիկական, գաղափարական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված այլ գործոններից.

**համապարտադիրություն**՝ բոլոր հարկ վճարողները պարտավոր են Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում, կարգով և չափով հաշվարկել և վճարել հարկեր ու վճարներ.

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները :

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում, տվյալ դեպքում Էջմիածին քաղաքային համայնքի բյուջե, մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված է, որ համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3րդ և 4-րդ կետերի՝ Էջմիածնի համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ ենթակետի՝ համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

ՀՀ Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 14 կետի համաձայն, որպես **լիազոր մարմին**՝ օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ու սահմաններում վարչարարություն կամ հսկողություն իրականացնող՝ հանդես է գալիս պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը.

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Օրենսգրքի 400-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հարկային իրավախախտման համար կիրառվող հարկային պատասխանատվության տեսակներից է տույժը:.

Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, Հարկային օրենսգրքի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացիներ Միշա Սուրենի Օհանյանից, Քնարիկ Օհանյանից, Վաչագան Օհանյանից, Գոհարիկ Օհանյանից, Հովհաննես Օհանյանից, Սարգիս Օհանյանից, Սուրեն Օհանյանից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել 214 627 **/երկու հարյուր տասնչորս հազար վեց հարյուր քսանյոթ/ՀՀ** դրամ, որպես 2015-2017թթ. համար գույքի վճարման ենթակա գույքահարկի ապառք՝ 111 739 **/հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր երեսունինը/ ՀՀ դրամ և 102 888 /հարյուր երկու հազար ութ հարյուր ութսունութ / ՀՀ** դրամ 2013-2017թթ-ի համար, որպես պարտավորությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Էջմիածնի համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ քաղաքապետարանի տեղեկագրում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 373

<< 19 >> սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 4/2 վարչական գործը՝ գույքահարկի և հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու պահանջի մասին, պարզեց որ, քաղաքացի Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանը /հասցե՝ ք. Էջմիածին, Մռավյան փող. թիվ 10 տուն, անձնագիր՝ AF 0374163/, հանդիսանալով գույքահարկ և հողի հարկի վճարող սուբյեկտ, <<Գույքահարկի մասին>> և <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքներով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 12.07.2018թ. տեղեկանքների հիման վրա 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համանքապետարանի հարկային պարտավորությունների և պարտադիր վճարումների իրավախախտումների դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով հրավիրել և անցկացրել է լսում Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ա) Համաձայն գույքհարկով հարկվող օբեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿՊ-ի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի՝ քննարկվող

- ք.Էջմիածին, Լիսիցյան փող. 32 հասցեում գտնվող շինությանը /այսուհետ՝ Գույք/, հանդիսանում է Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանի սեփականությունը, ինչը <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենք 4-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար 2017թ. վճարման ենթակա գույքահարկը կազմում է 52 853 /հիսուներկու հազար ութ հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ, որը մինչ այսօր չի վճարվել:

Քաղաքացի Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանի՝ նշված ժամանակահատվածների համար գույքահարկը վճարելու պարտականությունը կազմում է՝ 35 585 /երեսունհինգ հազար հինգ հարյուր ութսունհինգ/ ՀՀ դրամ ապառք և վերջիններս սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում հաշվարկվել են տույժեր՝ ժամկետանց չվճարված հարկի գումարի նկատմամբ՝ 17 268 /տասնյոթ հազար երկու հարյուր վաթսունութ/ ՀՀ դրամի չափով:

- ք. Էջմիածին, Նալբանդյան փող. գտնվող շինությանը /այսուհետ՝ Գույք, կադաստրային ծածկագիր՝ 04-002-0088-0082-001/, հանդիսանում է Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանի սեփականությունը, ինչը <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենք 4-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար 2016-2017թթ. վճարման ենթակա գույքահարկը կազմում է 1 981 /հազար ինը հարյուր ութսունմեկ/ ՀՀ դրամ, որը մինչ այսօր չի վճարվել:

Քաղաքացի Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանի՝ նշված ժամանակահատվածների համար գույքահարկը վճարելու պարտականությունը կազմում է՝ 1 322 /հազար երեք հարյուր քսաներկու/ ՀՀ դրամ ապառք և վերջիններս սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում հաշվարկվել՝ են տույժեր՝ ժամկետանց չվճարված հարկի գումարի նկատմամբ՝ 659 /վեց հարյուր հիսունինը/ ՀՀ դրամի չափով:

• ք. Էջմիածին, Արարատյան փող., 1 հասցեում գտնվող շինությանը /այսուհետ՝ Գույք/, հանդիսանում է Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանի սեփականությունը, ինչը <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենք 4-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար 2016-2017թթ. վճարման ենթակա գույքահարկը կազմում է 72 925 /յոթանասուներկու հազար ինը հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ, որը մինչ այսօր չի վճարվել:

Քաղաքացի Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանի՝ նշված ժամանակահատվածների համար գույքահարկը վճարելու պարտականությունը կազմում է՝ 49 099 /քառասունինը հազար իննսունինը/ՀՀ դրամ ապառք և վերջիններս սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում հաշվարկվել են տույժեր՝ ժամկետանց չվճարված հարկի գումարի նկատմամբ՝ 23 826 /քսաներեք հազար ութ հարյուր քսանվեց/ ՀՀ դրամի չափով:

• ք. Էջմիածին, Նալբանդյան փող., գտնվող շինությանը /այսուհետ՝ Գույք, /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0088-0038-001/, հանդիսանում է Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանի սեփականությունը, ինչը <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենք 4-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար 2016-2017թթ. վճարման ենթակա գույքահարկը կազմում է 163 097 /հարյուր վաթսուներեք հազար իննսունյոթ/ ՀՀ դրամ, որը մինչ այսօր չի վճարվել:

Քաղաքացի Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանի՝ նշված ժամանակահատվածների համար գույքահարկը վճարելու պարտականությունը կազմում է՝ 118 868 /հարյուր տասնութ հազար ութ հարյուր վաթսունութ/ ՀՀ դրամ ապառք և վերջիններս սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում հաշվարկվել են տույժեր՝ ժամկետանց չվճարված հարկի գումարի նկատմամբ՝ 44 229 /քառասունչորս հազար երկու հարյուր քսանինը/ ՀՀ դրամի չափով:

բ) Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿՊ կոմիտեի աշխատակազմի հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակից քաղվածքի՝

• ք.Էջմիածին, Նալբանդյան հասցեում գտնվող 0,0825հա ոչ գյուղ.նշանակության հողամասը հանդիսանում է քաղաքացի Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանի սեփականությունը, ինչը <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի վճարման ենթակա հարկը 2016-2017թթ. ընկած ժամանակահատվածի համար կազմում է 7 654 /յոթ հազար վեց հարյուր հիսունչորս/ ՀՀ դրամ, որը չի վճարվել:

Քաղաքացի Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանի՝ նշված ժամանակահատվածի համար հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է 5 153 /հինգ հազար հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամ՝ ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 2 501 /երկու հազար հինգ հարյուր մեկ/ ՀՀ դրամի չափով:

• ք.Էջմիածին, Լիսիցյան հասցեում գտնվող 0,0164հա ոչ գյուղ.նշանակության հողամասը հանդիսանում է քաղաքացի Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանի՝ սեփականությունը, ինչը <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի վճարման ենթակա հարկը 2016-2017թթ. ընկած ժամանակահատվածի համար կազմում է 1 521 /հազար հինգ հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամ, որը չի վճարվել:

Քաղաքացի Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանի՝ նշված ժամանակահատվածի համար հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում է 1 024 /հազար քսանչորս/ ՀՀ դրամ՝ ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 497 /չորս հարյուր իննսունյոթ/ ՀՀ դրամի չափով:

2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի օգոստոսի 31-ին հրավիրվել էին վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք փոստային անդորրագիր AG 010435523AM/ քաղաքացի Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանը:

Վերջինս չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պատշաճ ծանուցման վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

**Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ութերորդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

**խտրականության բացակայություն**՝ հարկերի ու վճարների կիրառությունը և հարկային վարչարարությունը չպետք է ունենան խտրական բնույթ՝ կախված սոցիալական, քաղաքական, կրոնական, էթնիկական, գաղափարական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված այլ գործոններից.

**համապարտադիրություն**՝ բոլոր հարկ վճարողները պարտավոր են Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում, կարգով և չափով հաշվարկել և վճարել հարկեր ու վճարներ.

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով

սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները :

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում, տվյալ դեպքում Էջմիածին քաղաքային համայնքի բյուջե, մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված է, որ համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3րդ և 4-րդ կետերի՝ Էջմիածնի համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ ենթակետի՝ համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

ՀՀ Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 14 կետի համաձայն, որպես լիազոր մարմին՝ օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ու սահմաններում վարչարարություն կամ հսկողություն իրականացնող՝ հանդես է գալիս պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը.

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ

պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Օրենսգրքի 400-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հարկային իրավախախտման համար կիրառվող հարկային պատասխանատվության տեսակներից է տույժը:.

Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, <<Հողի Հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-2-րդ, ՀՀ Հարկային օրենսգրքի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Հակոբ Ռաֆիկի Հովհաննիսյանից hօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել **300 031 /երեք հարյուր հազար երեսունմեկ/** ՀՀ դրամ, որպես հողի հարկի և գույքահարկի համար վճարման ենթակա գումար որից՝ ք.Էջմիածին, Լիսիցյան 32 հասցեում գտնվող շինության համար՝ **52 853 /հիսուներկու հազար ութ հարյուր հիսուներեք/** ՀՀ դրամ, ք. Էջմիածին, Նալբանդյան փող., գտնվող շինության համար /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0088-0082-001/ **1 981 /հազար ինը հարյուր ութսունմեկ/** ՀՀ դրամ, ք. Էջմիածին, Արարատյան փող., 1 հասցեում գտնվող շինության համար **72 925 /յոթանասուներկու հազար ինը հարյուր քսանհինգ/** ՀՀ դրամ, ք. Էջմիածին, Նալբանդյան փող., գտնվող շինության համար /կադաստրային ծածկագիր՝ 04-002-0088-0038-001/ **163 097 /հարյուր վաթսուներեք հազար իննսունյոթ/** ՀՀ դրամ, ք.Էջմիածին, Նալբանդյան հասցեում գտնվող 0,0825հա հողամասի համար **7 654 /յոթ հազար վեց հարյուր հիսունչորս/** ՀՀ դրամ և ք.Էջմիածին, Լիսիցիան հասցեում գտնվող 0,0164հա հողամասի համար **1 521 /հազար հինգ հարյուր քսանմեկ/** ՀՀ դրամ:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Էջմիածնի համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ քաղաքապետարանի տեղեկագրում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

### ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 574

« 19 » սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 4/5 վարչական գործը՝ գույքահարկի և հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու պահանջի մասին, պարզեց որ, քաղաքացի Անահիտ Թարվեդյանը /հասցե՝ ք.Էջմիածին, Ա. Մանուկյան փող., թիվ 258 տուն, ն/ք 007401599 /, հանդիսանալով գույքահարկ և հողի հարկի վճարող սուբյեկտ, <<Գույքահարկի մասին>> և <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքներով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 13.07.2018թ-ի և 14.07.2018թ-ի տեղեկանքների հիման վրա 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համանքապետարանի հարկային պարտավորությունների և պարտադիր վճարումների իրավախախտումների դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով հրավիրել և անցկացրել է լսում Անահիտ Թարվեդյանի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ա) Համաձայն գույքհարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿՊ-ի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի՝ քննարկվող ք.Էջմիածին, Ա.Մանուկյան փողոցի թիվ 258 հասցեում գտնվող անշարժ գույքը /այսուհետ՝ Գույք/ հանդիսանում է քաղաքացի Անահիտ Թարվերդյանի սեփականությունը, ինչը <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի վճարման ենթակա գույքահարկի մի մասը 2012-2017թթ. ընկած ժամանակահատվածի համար կազմում է 271 984 /երկու հարյուր յոթանասունմեկ հազար ինը հարյուր ութսունչորս/ՀՀ դրամ, որը չի վճարվել:

Քաղաքացի Անահիտ Թարվերդյանի՝ 2013-2017թթ-ի համար գույքահարկը վճարելու պարտականությունը կազմում է 183 409 /հարյուր ութսուներեք հազար չորս հարյուր ինը/ ՀՀ դրամ ՝ ապառք, վերջինս սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում հաշվարկվել են տույժեր,ժամկետանց չվճարված հարկի գումարի նկատմամբ 2012-2017թթ-ի համար՝ 88 575 /ութսունութ հազար հինգ հարյուր յոթանասունհինգ/ՀՀ դրամի չափով:

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 4/7 վարչական գործը՝ գույքահարկի և հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու պահանջի մասին, պարզեց որ, քաղաքացի Վարդուշ Հարությունի Սարգսյանը /հասցե՝ ք.Էջմիածին Անդրանիկ փող.,թիվ 116 տուն, անձնագիր ________________/, հանդիսանալով գույքահարկ և հողի հարկի վճարող սուբյեկտ, <<Գույքահարկի մասին>> և <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքներով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 12.07.2018թ. տեղեկանքների հիման վրա 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համանքապետարանի հարկային պարտավորությունների և պարտադիր վճարումների իրավախախտումների դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, գույքահարկի և հողի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով հրավիրել և անցկացրել է լսում Վարդուշ Հարությունի Սարգսյանի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ա) Համաձայն գույքհարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿ-ի աշխատակազմի ամփոփ ցուցակից քաղվածքի՝ քննարկվող ք.Էջմիածին, Անդրանիկ փողոցի թիվ 116 հասցեում գտնվող անշարժ գույքը /այսուհետ՝ Գույք/, հանդիսանում է քաղաքացի Վարդուշ Հարությունի Սարգսյանի սեփականությունը, ինչը <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի վճարման ենթակա գույքահարկը 2008-2017թթ. ընկած ժամանակահատվածի համար կազմում է 687 061 /վեց հարյուր ութսունյոթ հազար վաթսունմեկ/ ՀՀ դրամ, որը չի վճարվել:

Քաղաքացի Վարդուշ Հարությունի Սարգսյանի՝ նշված ժամանակահատվածների համար գույքահարկը վճարելու պարտականությունը կազմում է 454 490 /չորս հարյուր հիսունչորս հազար չորս հարյուր իննսուն/ ՀՀ դրամ՝ ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ՝ 232 571 /երկու հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր յոթանասունմեկ/ ՀՀ դրամի չափով:

բ) Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿՊ կոմիտեի աշխատակազմի հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների ամփոփ ցուցակից քաղվածքի՝ ք.Էջմիածին, Անդրանիկ փողոցի թիվ 116 հասցեում գտնվող 0,05հա ոչ գյուղ. նշանակության հողամասը հանդիսանում է քաղաքացի Վարդուշ Հարությունի Սարգսյանի սեփականությունը, ինչը <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի վճարման ենթակա հարկը 2008-2017թթ. ընկած ժամանակահատվածի համար կազմում է 46 934 /քառասունվեց հազար ինը հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամ, որը չի վճարվել:

Քաղաքացի Վարդուշ Հարությունի Սարգսյանի ՝ նշված ժամանակահատվածի համար հողի հարկը վճարելու պարտականությունը կազմում 31 230 /երեսունմեկ հազար երկու հարյուր երեսուն/ ՀՀ դրամ՝ ապառք, որը օրենքով սահմանված ժամկետում չվճարելու արդյունքում առաջացել է տույժ 15 704 /տասնհինգ հազար յոթ հարյուր չորս/ ՀՀ դրամի չափով:

2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի օգոստոսի 31-ին հրավիրվել էին վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք փոստային անդորրագիր AG 010435568AM/ քաղաքացի Վարդուշ Հարությունի Սարգսյանը:

Վերջինս չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պատշաճ ծանուցման վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

**Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ութերորդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

**խտրականության բացակայություն՝** հարկերի ու վճարների կիրառությունը և հարկային վարչարարությունը չպետք է ունենան խտրական բնույթ՝ կախված սոցիալական, քաղաքական, կրոնական, էթնիկական, գաղափարական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված այլ գործոններից.

**համապարտադիրություն՝** բոլոր հարկ վճարողները պարտավոր են Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում, կարգով և չափով հաշվարկել և վճարել հարկեր ու վճարներ.

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները :

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում, տվյալ դեպքում Էջմիածին քաղաքային համայնքի բյուջե, մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված է, որ համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3րդ և 4-րդ կետերի՝ Էջմիածնի համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ ենթակետի՝ համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

ՀՀ Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 14 կետի համաձայն, որպես լիազոր մարմին՝ օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ու սահմաններում վարչարարություն կամ հսկողություն իրականացնող՝ հանդես է գալիս պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը.

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնաս լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցի պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարում պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Օրենսգրքի 400-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հարկային իրավախախտման համա կիրառվող հարկային պատասխանատվության տեսակներից է տույժը:.

Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանվա կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարել կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հ օրենքի, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, <<Հողի Հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-2-րդ, ՀՀ Հարկայի օրենսգրքի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-ր հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Վարդուշ Հարությունի Սարգսյանից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել 733 995 /յո հարյուր երեսուներեք հազար ինը հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամ, որպես հողի հարկի և գույքահարկի համա վճարման ենթակա գումար որից՝ գույքահարկ 687 061 /վեց հարյուր ութսունյոթ հազար վաթսունմեկ/ ՀՀ դրամ և հո հարկ 46 934 /քառասունվեց հազար ինը հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամ:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Էջմիածնի համայնքի ղեկավարին, դրա ուժի մ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամս ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչակ վարույթի մասին> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ Ս Հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմա ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահ azdarar.am-ի կամ քաղաքապետարանի տեղեկագրում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 579

«19» սեպտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը քննության առնելով թիվ 4/8 վարչական գործը՝ գույքահարկի և հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու պահանջի մասին, պարզեց որ քաղաքացի Ալիսա Նավասարդյանը /հասցե՝ ք. Էջմիածին, Անդրանիկ փող., թիվ 178 տուն, անձնագիր 000633255/, հանդիսանալով գույքահարկ և հողի հարկ վճարող սուբյեկտ <<Գույքահարկի մասին>> և <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքներով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 12.07.2018թ. տեղեկանքի հիման վրա 2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համայնքապետարանի հարկային պարտավորությունների և պարտադիր վճարումների իրավախախտումների դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով հրավիրել և անցկացրել է լսում Ալիսա Նավասարդյանի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.**

ա) Համաձայն գույքահարկով հարկվող օյբեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿՊ-ի ամփոփ ցուցակից քաղվածքի՝ քննարկվող ք.Էջմիածին, Անդրանիկ փող., 178 հասցեում գտնվող անշարժ գույքը /այսուհետ՝ Գույք/, հանդիսանում է քաղաքացի Ալիսա Նավասարդյանի սեփականությունը, ինչը <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար գույքահարկի վճարման պարտքը կազմում է **607 794 /վեց հարյուր յոթ հազար յոթ հարյուր իննսունչորս/ ՀՀ դրամ,** որից **411 283 /չորս հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր ութսուներեք/ ՀՀ դրամը** 2013-2017թթ. ապառքի գումար և **196 511 /հարյուր իննսունվեց հազար հինգ հարյուր տասնմեկ/ ՀՀ դրամը**՝ 2013-2017թթ տույժերի գումարը, որը չի վճարվել մինչ օրս:

բ) Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի կողմից տրված տվյալների /հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության ամփոփ ցուցակից քաղվածք/ ք.Էջմիածին, Անդրանիկ փող., 178 հասցեում գտնվող 0,095 հա մակերեսով ոչ գյուղատնտեսական նշանակության հողատարածքը հանդիսանում է քաղաքացի Ալիսա Նավասարդյանի սեփականությունը, ինչը <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է **9 652 /ինը հազար վեց հարյուր հիսուներկու/ ՀՀ դրամ,** որից **5 934 /հինգ հազար ինը հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամը**՝ 2017թ. ապառքի գումար, իսկ **3 718 /երեք հազար յոթ հարյուր տասնութ/ ՀՀ դրամը**՝ 2017թ. առաջացած տույժերի գումար, որը չի վճարվել մինչ օրս:

2018 թվականի հուլիսի 30-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի օգոստոսի 31-ին հրավիրվել էին վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք փոստային անդորրագիր AG 010429001AM/ քաղաքացի Ալիսա Նավասարդյանը:

Վերջինս չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պատշաճ ծանուցման վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ութերորդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

**խտրականության բացակայություն**՝ հարկերի ու վճարների կիրառությունը և հարկային վարչարարությունը չպետք է ունենան խտրական բնույթ՝ կախված սոցիալական, քաղաքական, կրոնական, էթնիկական, գաղափարական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված այլ գործոններից.

**համապարտադիրություն**՝ բոլոր հարկ վճարողները պարտավոր են Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում, կարգով և չափով հաշվարկել և վճարել հարկեր ու վճարներ.

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները :

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում, տվյալ դեպքում Էջմիածին քաղաքային համայնքի բյուջե, մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված է, որ համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3րդ և 4-րդ կետերի՝ Էջմիածնի համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ ենթակետի՝ համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

ՀՀ Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 14 կետի համաձայն, որպես լիազոր մարմին՝ օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ու սահմաններում վարչարարություն կամ հսկողություն իրականացնող՝ հանդես է գալիս պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը.

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Օրենսգրքի 400-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հարկային իրավախախտման համար կիրառվող հարկային պատասխանատվության տեսակներից է տույժը:.

Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ հոդվածներով, <<Հողի Հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-2-րդ հոդվածներով, ՀՀ Հարկային օրենսգրքով, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Ալիսա Նավասարդյանից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել 617 446 /վեց հարյուր տասնյոթ հազար չորս հարյուր քառասունվեց/ ՀՀ դրամ՝ որից 607 794 /վեց հարյուր յոթ հազար յոթ հարյուր իննսունչորս/ ՀՀ դրամ, որպես ք.Էջմիածին, Անդրանիկ փող., 178 հասցեում գտնվող անշարժ գույքի գույքահարկ և 9 652 /ինը հազար վեց հարյուր հիսուներկու/ ՀՀ դրամ, որպես ք. Էջմիածին, Անդրանիկ փող., 178 հասցեում գտնվող 0,095 հա մակերեսով ոչ գյուղատնտեսական նշանակության մակերեսով հողի հարկ:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Էջմիածնի համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ քաղաքապետարանի տեղեկագրում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 580

19 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ԽԱՆՈՒԹԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Լալա Հովհաննիսյանին պատկանող խանութին /հիմք՝ վկայական N 15012013-04-0333/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոց փողոց թիվ 6բ/46:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 581

19 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Գայանե Սարգսյանին պատկանող բնակարանին /հիմք՝ սեփ. վկ. 2360649/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Արարատյան փողոց թիվ 34ա շենք թիվ 15/5 բնակարան:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 582

19 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՀԱՆ ՎԻԼԻԿԻ ՎԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 267 տան բնակիչ Վահան Վիլիկի Վանյանի դիմումը պարզվեց, որ իրեն սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 19.04.1997թ. տրված հողամասի առուծախի պայմանագիրը/, Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 190 հասցեում գտնվող 456քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա կառուցված բնակելի տունը և դրան կից կառուցված բնակելի նշանակության՝ օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Ա.Մանուկյան թաղամասի թիվ 190 հասցեում գտնվող 456քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա կառուցված բնակելի տունը և դրան կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել՝ Վահան Վիլիկի Վանյանի /ծնված 12.01.1970թ./ սեփականությունը:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 190:
3. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 583

19 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Արամ Մկրտչյանին պատկանող տանը /հիմք՝ վկայական 737084/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Ա.Մանուկյան 1-ին թաղամաս թիվ 75 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 584

19 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Գրիգոր Բաղումյանին պատկանող տաղավարին /հիմք՝ վկայական 1466036/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Չարենց փողոց թիվ 13/68 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 585

19 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Լաուրա Մարտիրոսյանին պատկանող /սեղ.մատյան 4880/ հողամասին շինություններով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Զվարթնոց թաղամաս Մանուշյան փողոց թիվ 2/8 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 586

19 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Լաուրա Մարտիրոսյանին պատկանող /սեղ.մատյան 4880/ հողամասին շինություններով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Ջվարթնց թաղամաս Մանուշյան փողոց թիվ 2/7 :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 587

19 սեպտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԻՓՍԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՂԱՐԻԲՅԱՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Մ.Գորգիսյան փողոցի թիվ 6 տան բնակիչ Հարություն Սերյոժայի Ղարիբյանի դիմումը պարզվեց, որ իրեն և Ռիփսիկ Սերյոժայի Ղարիբյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 26.09.2008թ. տրված թիվ 6225 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը/, Էջմիածին քաղաքի Մ.Գորգիսյան /նախկին Կույբիշև/ փողոցի թիվ 6 հասցեում գտնվող 187քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Մ.Գորգիսյան /նախկին Կույբիշև/ փողոցի թիվ 6 հասցեում գտնվող 187քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել՝ Հարություն /ծնված 21.04.1962թ./ և Ռիփսիկ /ծնված 16.07.1960թ./ Սերյոժայի Ղարիբյանների սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 588

19 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԷՋՄԻԱԾՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 10.07.2018Թ. ԹԻՎ 383 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-34-րդ հոդվածների և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքապետի 10.07.2018թ. «Շինության գործառնական նշանակությունը, հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու և բաժանելու մասին» թիվ 383 որոշման մեջ կատարել փոփոխություն.

. Որոշման երկրորդ կետի «Վերը նշված շինության պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 3838քմ մակերեսով բնակավայրի հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, իսկ գործառնական նշանակությունը» բառերից հետո «արտադրականի» բառը փոփոխել «արդյունաբերական օբյեկտների» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

# ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

# ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 589

19 նոյեմբերի 2018թ.

ք.էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՆԻԿ ՍՈՒՄԲԱՏԻ ԱՎԱԳՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Վանիկ Սումբատի Ավագյանի լիազորված անձ՝ Եպրաքսիա Մնացականի Ավագյանի դիմումը՝ պարզվեց, որ Վանիկ Սումբատի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ 04.08.1988թ. տրված տեխնիկական անձնագիրը, Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 25.12.2013թ. տրված թիվ 7154 սեղանամատյանով գրանցված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից 29.05.2018թ. տրված վճիռը քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ 1/3221/02/17/, էջմիածին քաղաքի Հ.Հովհաննիսյան փողոցի թիվ 36 հասցեում գտնվող 210քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. էջմիածին քաղաքի Հ.Հովհաննիսյան փողոցի թիվ 36 հասցեում գտնվող 210քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել՝ Վանիկ Սումբատի Ավագյանի /ծնված 19.11.1976թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 590

«20» սեպտեմբեր 2018թ. ք.Էջմիածին

## ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ ու 4-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.08.2018թ. թիվ 858-Ն որոշմամբ և <<Տեղական ինքնակառավարման մասին օրենքի>> Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի ղեկավարի 21.10.2018թ-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումները `

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի ղեկավարի 21.10.2018թ-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման նպատակով Էջմիածնի քաղաքային համայնքի տարածքում գործող թիվ 14 ընտրատարածքում կազմավորված թվով 23 ընտրատարածքային տեղամասային կենտրոնների վարչական տարածքներում և Էջմիածնի համայնքապետարանին պատկանող Էջմիածին քաղաքի Սուրբ Մեսրոպ Մաշտոց ու Սուրբ Մովսես Խորենացի փողոցների մայթերին գտնվող 7/յոթ/ գովազդային վահանակների վրա առանձնացնել տեղեր քարոզչական պաստառները անվճար փակցնելու համար /պատասխանատու՝ Էջմիածնի համայնքապետարանի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի պետ՝ Սուրեն Թոփալյան, հեռ.՝ 093 28 00 98/:

2. Սույն որոշման քաղվածքն ուղարկել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 591

<<20>> սեպտեմբերի 2018թ ք.Էջմիածին

## ԷՋՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ ԱՆՎՃԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԴԱՀԼԻՃՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի երկրորդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.08.2018թ. թիվ 858-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին օրենքի>> Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի ղեկավարի 21.10.2018թ-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման, նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի ղեկավարի 21.10.2018թ-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման, նախընտրական ժողովներ, թեկնածուների հետ ընտրողների հանդիպումներ և ընտրությունների հետ կապված այլ միջոցառումներ կազմակերպելու նպատակով անվճար հիմունքներով, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել Էջմիածնի համայնքապետարանի Կոմիտասի անվան մշակույթի պալատ ՀՈԱԿ-ի 475 նստատեղ ունեցող դահլիճը /հասցե՝ ք.Էջմիածին, Սբ.Մեսրոպ Մաշտոց 75 /:
2. Սույն որոշման քաղվածքն ուղարկել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 592

<<20>> սեպտեմբերի 2018թ ք.Էջմիածին

## 2018Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 18-րդ հոդվածի 1-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 02.08.2018թ. թիվ 858-Ն որոշումը ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին համայնքի ղեկավարի 21.10.2018թ-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումները

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածնի քաղաքային համայնքի տարածքում գտնվող թիվ 14 ընտրատարածքում կազմավորել թվով 23 ընտրական տեղամասեր՝ ըստ գտնվելու վայրի հերթական հաջորդականության և համարակալման՝ սահմանելով համապատասխան տեղամասային կենտրոններ՝

ԹԻՎ 14/1 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ՝ Ե. ՕՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 7 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ – ՄՊԱՐԱՊԵՏ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ 7/7 ՓՈՂՈՑ /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ՎԱՐՈՒԺԱՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ հեռ: 093 32 21 05/

ԹԻՎ 14/2 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ՝ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 4 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ - ՍՊԱՆԴԱՐՅԱՆ 29/1 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՈՒՍՅԱԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ, հեռ: 093 57 51 84/

ԹԻՎ 14/3 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ Գ. ՆԱՐԵԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ- ՍԲ. ՄԱՇՏՈՑԻ 75/2 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ԱԼՎԱՐԴ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, հեռ: 093 53 94 48/

ԹԻՎ 14/4 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ <<ԾԻԾԵՌՆԱԿ>>ԹԻՎ 13 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ- ԲԱՂՐԱՄՅԱՆ 0 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ԼԻԼԻԹ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ հեռ: 093 32 21 18/

ԹԻՎ 14/5 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ՝ Մ. ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ -ԲԱՂՐԱՄՅԱՆ 12 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԻՆԵ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ, հեռ: 099 80 00 23/

ԹԻՎ 14/6 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ Ե. ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ – ՍԲ. ՄԱՇՏՈՑ 0 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ՋՈՐԻԿ ԲԱԲԱՅԱՆ, հեռ: 093 98 59 51/

ԹԻՎ 14/7 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ Մ. ԵԿՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 1 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՀՈԱԿ- ԿՈՄԻՏԱՍԻ ՀՐԱՊԱՐԱԿ /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ԲԵՆԻԿ ՇԱՄԻՐՅԱՆ, հեռ: 094 46 21 46/

ԹԻՎ 14/8 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ ՀՈԱԿ – ՍԲ. Մ.ՄԱՇՏՈՑ 75 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ԱԼՎԻՆԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, հեռ: 098 70 74 30/

ԹԻՎ 14/9 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ՝ <<ՇՈՒՇԱՆ>> ԹԻՎ 10 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ- ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ 68/1 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՈՒՍՅԱԿ, հեռ: 077 45 55 50/

ԹԻՎ 14/10 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ <<ՁՆԾԱՂԻԿ>> ԹԻՎ 14 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ- Վ. ԿՈՍՏԱՆՅԱՆ 7 ՓՈՂ./ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ԹԵՐՄԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ, հեռ: 094 45 00 13/

ԹԻՎ 14/11 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ <<ԱՐԵՎԻԿ>> ԹԻՎ 6 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ -Մ. ՄԵԽԱԿՅԱՆ 35/2 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ՔՐԻՍՏԻՆԵ ՆԻԿՈՅԱՆ , հեռ: 094 38 30 30/

ԹԻՎ 14/12 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 9 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ - ՕՐՋՈՆԻԿԻՁԵ 27/1 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ՄԱՐԻԵՏԱ ՍԱՄՎԵԼՅԱՆ, հեռ: 093 19 85 34/

ԹԻՎ 14/13 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ <<ԷՕՌՆԵԿԵԱՆ>> ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ - ԱՐԱՐԱՏՅԱՆ 7 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ՍՈՒՍԱՆՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ, հեռ: 094 10 01 62/

ԹԻՎ 14/14 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ՝ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ - ՍԲ. Մ. ԽՈՐԵՆԱՑԻ 101 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ՍԵԴԱ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ, հեռ: 096 05 37 07/

ԹԻՎ 14/15 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ՝ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ– ՍԲ.Մ. ԽՈՐԵՆԱՑԻ 7 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ՀՈՒՆԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, հեռ: 055 23 10 01/

ԹԻՎ 14/16 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ՝ Վ.ՌՇՏՈՒՆՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ 11 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ – ԼԻԴԻՑԵ 11 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ՄԱՐԳԱՐԻՏԱ ՍԱՐԳՍՅԱՆ, հեռ: 077 08 25 00/

ԹԻՎ 14/17 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ <<ԳԱՐՈՒՆ>> ԹԻՎ 5 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ - ՉԱՐԵՆՑ 8/1/ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ԱՐՓԻՆԵ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, հեռ: 095 94 26 30/

ԹԻՎ 14/18 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ <<ՀԱՍՄԻԿ>> ԹԻՎ 11 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ -ՊԱՏԿԱՆՅԱՆ 37/2 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ՄԱՐԻԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ, հեռ: 093 54 24 39/

ԹԻՎ 14/19 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ՝ Գ. ՆԺԴԵՀԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ -ՄԱՆՈՒՇՅԱՆ 2/3 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ԷՍՏԵՐ ԳԱԼՍՏՅԱՆ, հեռ: 093 23 53 00/

ԹԻՎ 14/20 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ՝ Մ. ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ 10 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ -ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ 20 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ՀԱՅԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, հեռ: 093 19 36 46/

ԹԻՎ 14/21 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ՝ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 12 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ - ԱՐԱԳԱԾԻ ԶԱՆԳՎԱԾ 18 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ՎԵՄԻՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ հեռ: 093 41 07 08/

ԹԻՎ 14/22 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ՝ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՏԱՐԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ - ԶՎԱՐԹՆՈՑ ԹԱՂ., ԱՅԳԵՍՏԱՆ 20 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆԻ Ժ/Պ՝ ՀՐԱՆՈՒՇ ՍԱՐԳՍՅԱՆ հեռ: 093 69 49 45/

ԹԻՎ 14/23 ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍ ԿԵՆՏՐՈՆԸ <<ԶՎԱՐԹՆՈՑ>> ԹԻՎ 15 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-ԱՐԱԳԱԾԻ ԶԱՆԳՎԱԾ 20 /ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ հեռ: 094 49 59 26/

2. Վերը կազմավորված ընտրական տեղամասերի տարածքները տնօրինող հաստատությունների ղեկավարներին և քաղաքացիներին սահմանված ժամկետում հայտարարությունների միջոցով տեղեկացնել տեղամասային կենտրոնների գտնվելու մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 593

20 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, 04-002-0040-0045 ծածկագրով հողամասին բնակելի տնով /հիմք՝ վկ. 02042014-04-0024/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Թումանյան փողոց թիվ 2/1:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 594

20 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Քնարիկ Սարգսյանին պատկանող բնակելի տանը /հիմք՝վկայական 036698/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Հ.Հակոբյան փողոց թիվ 7/1։
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 595

20 սեպտեմբերի 2018թ. ք. Էջմիածին

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Արման Ղազարյանին /համասեփ. Լալա Հովհաննիսյան, Շուշանիկ Ղազարյան/ պատկանող /վկ. 2687981, N 27012016-04-0005/բնակարանները միավորել և տրամադրել մեկ ընդհանուր հասցե՝ ք. Էջմիածին, Սբ.Մ.Խորենացի փողոց թիվ 14 շենք թիվ 21 բնակարան :
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 596

«24» սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

### ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԹՎՈՎ 1 ՊԱՏՈՒՀԱՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցի թիվ 23 տան բնակիչ Լևոն Գևորգի Քյամանչյանը դիմել է Էջմիածնի քաղաքապետարան իրեն և Լյուդմիլա Գևորգի Քյամանչյանին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ սեփականության վկայական թիվ 27042015--04-0017 տրված 27.04.2015թ. և «Գույք 1» ՍՊԸ-ի /որակավորման վկայական թիվ 0331/ կողմից տրված չափագրությունը և եզրակացությունը/, Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցի թիվ 23 հասցեում գտնվող բնակելի տան ինքնակամ կառուցված 8,2քմ /ներքին 6,5քմ, արտաքին 8,2քմ/ կառուցապատ մակերեսով շինությունը, թվով 1 պատուհանը օրինանականացնելու և բաժանելու խնդրանքով: Հաշվի առնելով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման և անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցի թիվ 23 հասցեում գտնվող բնակելի տան ինքնակամ կառուցված 8,2քմ /ներքին 6,5քմ, արտաքին 8,2քմ/ կառուցապատ մակերեսով շինությունը և թվով 1 պատուհանը ճանաչել օրինական:
2. Ինքնակամ կառուցված 8,2քմ կառուցապատ մակերեսով շինության և թվով 1 պատուհանի համար՝ սահմանված 29440 /քսանինը հազար չորս հարյուր քառասուն/ ՀՀ դրամ վճարը սույն որոշման ընդունման օրվանից 60 օրվա ժամկետում չմուծելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցի թիվ 23 հասցեում գտնվող հողամասի 481,5քմ մակերեսով բաժանված մասին բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին Արարատյան փողոցի թիվ 23, 465,5քմ մակերեսով բաժանված մասին բնակելի տնով տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին Արարատյան փողոցի թիվ 23/1, 16քմ մակերեսով բաժանված մասին շինությունով /պարիսպ/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին Արարատյան փողոցի թիվ 23/2:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 597

24 սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

**ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387 – Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Էջմիածին քաղաքում գտնվող, Գրիգոր Կարապետյանին պատկանող բնակելի տանը /հիմք՝ վկ. 2616897/ տրամադրել հասցե՝ ք. Էջմիածին, Վազգեն Առաջին փողոց թիվ 6/73:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ

## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 598

24 մայիսի 2018թ. ք.Էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐԴՈՒՇ ՍԱՐԳՍԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով էջմիածին քաղաքի Արարատյան փողոցի թիվ 53-57 տան բնակիչ Վարդուշ Սարգսի Գրիգորյանի լիազորված անձ՝ Լիլիթ Սերյոժայի Տեր-Սահակյանի դիմումը՝ պարզվեց, որ իր վստահորդին սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ Վաղարշապատ նոտարական տարածքի նոտար Ալեք Ավետյանի կողմից 08.07.2016թ. տրված թիվ 3748 և 3749 սեղանամատյաններով գրանցված սեփականության իրավունքի և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը/, էջմիածին քաղաքի Արարատյան փողոցի թիվ 53-57 հասցեում գտնվող 140քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Արարատյան փողոցի թիվ 53-57 հասցեում գտնվող 140քմ մակերեսով փաստացի առկա սահմանազատված բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա գտնվող բնակելի տանը կից կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, համարել՝ Վարդուշ Սարգսի Գրիգորյանի /ծնված 11.04.1952թ./ սեփականությունը:
2. Բնակելի տանը տրամադրել հասցե՝ ք. էջմիածին, Արարատյան փողոց թիվ 55:
3. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով նախատեսված պայմաններին:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

## ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
## ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ  ԹԻՎ 593

24 սեպտեմբերի 2018թ.

ք.Էջմիածին

### ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՉՊԱՀՊԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՐԳԻՍ ՌՈՒԲԵՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Էջմիածին քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 72 տան բնակիչ Սարգիս Ռուբենի Կարապետյանի դիմումը պարզվել է, որ.

- համաձայն 12.06.1997թ. տրված սեփականության վկայագրի, Էջմիածին քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 72 հասցեում գտնվող բնակելի տունը պատկանում է Սարգիս Ռուբենի Կարապետյանին,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասը կազմում է 329քմ, որի վրա կառուցված է բնակելի տուն, բնակելի նշանակության օժանդակ շինություններ,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասին կից ավել օգտագործվում է 16քմ սահմանազատված հողամաս,
- բնակելի տան կառուցման և սպասարկման համար օրինական հողամասի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը կառուցվել են մինչև 2001թ մայիսի 15-ը, ինչպես նաև դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և չեն առաջացնում սերվիտուտ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Էջմիածին քաղաքի Սպանդարյան փողոցի թիվ 72 հասցեում գտնվող բնակելի տան կառուցման ու սպասարկման համար օրինական հողամասի վրա կառուցված բնակելի նշանակության օժանդակ շինությունները և ավել օգտագործվող 16քմ մակերեսով հողամասը, որոնց նկատմամբ չեն պահպանվել քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը համարել՝ Սարգիս Ռուբենի Կարապետյանի /ծնված 25.04.1955թ./ սեփականությունը:
2. Վերը նշված անշարժ գույքը բավարարում է 10.06.2008թ. ընդունված ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածով նախատեսված պայմաններին:
3. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 600

«25» սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 5/16 վարչական գործը՝ գույքահարկի և հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու պահանջի մասին, պարզեց, որ քաղաքացի Հայկ Արամի Մուրադյանը /հասցե՝ ք. Էջմիածին, Սովետական Բանակ փող., թիվ 18 տուն, նույն. քարտ 652487182/, հանդիսանալով գույքահարկ և հողի հարկի վճարող սուբյեկտ, <<Գույքահարկի մասին>> և <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքներով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 09.08.2018թ. տեղեկանքների հիման վրա 2018 թվականի սեպտեմբերի 05-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համանքապետարանի հարկային պարտավորությունների և պարտադիր վճարումների իրավախախտումների դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով հրավիրել և անցկացրել է լսում Հայկ Մուրադյանի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ա) Համաձայն գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿՊ-ի ամփոփ ցուցակից քաղվածքի՝ քննարկվող ք. Էջմիածին, Սովետական Բանակ փող., թիվ 18 հասցեում գտնվող անշարժ գույքը /այսուհետ՝ Գույք/, հանդիսանում է քաղաքացի Հայկ Մուրադյանի սեփականությունը, ինչը <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար գույքահարկի վճարման պարտքը կազմում է 183 987 /մեկ հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր ութսունյոթ/ ՀՀ դրամ, որից 90 601 /իննսուն հազար վեց հարյուր մեկ/ ՀՀ դրամը 2016-2017թթ. ապառքի գումար և 93 386 /իննսուներեք երեք հարյուր ութսունվեց / ՀՀ դրամը՝ 2014-2017թթ. տույժերի գումարը, որը չի վճարվել մինչ օրս:

բ) Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի կողմից տրված տվյալների /հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության ամփոփ ցուցակից քաղվածք/ ք. Էջմիածին, Սովետական Բանակ փող., թիվ 18 հասցեում գտնվող 0,08 հա մակերեսով ոչ գյուղատնտեսական նշանակության հողատարածքը հանդիսանում է քաղաքացի Հայկ Մուրադյանի սեփականությունը, ինչը <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է 1 285 /մեկ հազար երկու հարյուր ութսունհինգ/ ՀՀ դրամ, որը 2016-2017թթ. առաջացած տույժերի գումարն է, որը չի վճարվել մինչ օրս:

2018 թվականի սեպտեմբերի 05-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի սեպտեմբերի 14-ին հրավիրվել էին վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք փոստային անդորրագիր AG 011518887AM/ քաղաքացի Հայկ Մուրդյանը:

Վերջինս չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պատշաճ ծանուցման վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

**Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.**

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ութերորդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

**խտրականության բացակայություն**՝ հարկերի ու վճարների կիրառությունը և հարկային վարչարարությունը չպետք է ունենան խտրական բնույթ՝ կախված սոցիալական, քաղաքական, կրոնական, էթնիկական, գաղափարական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված այլ գործոններից.

**համապարտադիրություն**՝ բոլոր հարկ վճարողները պարտավոր են Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում, կարգով և չափով հաշվարկել և վճարել հարկեր ու վճարներ.

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները :

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան

բյուջե են վճարում, տվյալ դեպքում Էջմիածին քաղաքային համայնքի բյուջե, մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված է, որ համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3րդ և 4-րդ կետերի՝ Էջմիածնի համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ ենթակետի՝ համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

ՀՀ Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 14 կետի համաձայն, որպես լիազոր մարմին՝ օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ու սահմաններում վարչարարություն կամ հսկողություն իրականացնող՝ հանդես է գալիս պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը.

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի

ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Օրենսգրքի 400-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հարկային իրավախախտման համար կիրառվող հարկային պատասխանատվության տեսակներից է տույժը:.

Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, <<Հողի Հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-2-րդ, ՀՀ Հարկային օրենսգրքի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Հայկ Արամի Մուրդյանից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել՝ 185 272 /մեկ հարյուր ութսունհինգ հազար երկու հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամ՝ որից 183 987 / մեկ հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր ութսունյոթ/ ՀՀ դրամ, որպես ք. Էջմիածին, Սովետական Բանակ փող., թիվ 18 հասցեում գտնվող անշարժ գույքի գույքահարկ և 1 285 /մեկ հազար երկու հարյուր ութսունհինգ/ ՀՀ դրամ, որպես ք. Էջմիածին, Սովետական Բանակ փող., թիվ 18 հասցեում գտնվող 0,08 հա մակերեսով ոչ գյուղատնտեսական նշանակության մակերեսով հողի հարկ:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Էջմիածնի համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ քաղաքապետարանի տեղեկագրում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԷՋՄԻԱԾԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 601

«25» սեպտեմբերի 2018թ. ք.Էջմիածին

## ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉՎՃԱՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՊԱՀԱՆՋԻ ՄԱՍԻՆ

Էջմիածին համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 5/17 վարչական գործը՝ գույքահարկի և հողի հարկի ժամանակին չվճարված գումարները գանձելու պահանջի մասին, պարզեց,որ քաղաքացի Տիգրան Հրաչիկի Աբգարյանը /հասցե՝ ք. Էջմիածին, Մ. Մեխակյան փող., թիվ 90 տուն, անձնագիր AH 0608780/, հանդիսանալով գույքահարկ և հողի հարկի վճարող սուբյեկտ, <<Գույքահարկի մասին>> և <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքներով սահմանված կարգով չի կատարել գույքահարկ և հողի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի ապահովման բաժնի 09.08.2018թ. տեղեկանքների հիման վրա 2018 թվականի սեպտեմբերի 05-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> ենթակետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով հարուցվել է վարչական վարույթ: Էջմիածնի համանքապետարանի հարկային պարտավորությունների և պարտադիր վճարումների իրավախախտումների դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման հանձնաժողովը, գույքահարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով հրավիրել և անցկացրել է լսում Տիգրան Աբգարյանի բացակայությամբ, ով պատշաճ ծանուցված է եղել:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

ա) Համաձայն գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿՊ-ի ամփոփ ցուցակից քաղվածքի՝ քննարկվող ք. Էջմիածին, Մաշտոց փող., թիվ 46 հասցեում գտնվող անշարժ գույքը /այսուհետ՝ Գույք/, հանդիսանում է քաղաքացի Տիգրան Աբգարյանի սեփականությունը, ինչը <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար գույքահարկի վճարման պարտքը կազմում է 374 447 /երեք հարյուր յոթանասունչորս հազար չորս հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամ, որից 240 941 /երկու հարյուր քառասուն հազար ինը հարյուր քառասունմեկ/ ՀՀ դրամը 2016-2017թթ. ապառքի գումար և 133 506 /մեկ հարյուր երեսուներեք հազար հինգ հարյուր վեց/ ՀՀ դրամը՝ 2015-2017թթ. տույժերի գումարը, որը չի վճարվել մինչ օրս:

բ) Համաձայն գույքիարկով հարկվող օյբեկտ համարվող շենքերի և շինությունների հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության հարկային (տարածքային) տեսչության ՀՀ ԿԱ ԱԳԿՊ-ի ամփոփ ցուցակից քաղվածքի՝ քննարկվող ք. Էջմիածին, Մեխակյան փող., թիվ 36 հասցեում գտնվող անշարժ գույքը /այսուհետ՝ Գույք/, հանդիսանում է քաղաքացի Տիգրան Աբգարյանի սեփականությունը, ինչը <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է հարկվող օբյեկտ: Գույքի համար գույքահարկի վճարման պարտքը կազմում է **45 700 /քառասունհինգ հազար յոթ հարյուր/** ՀՀ դրամ, որից **29 510 /քսանինը հազար հինգ հարյուր տաս/** ՀՀ դրամը 2016-2017թթ. ապառքի գումար և **16 190 /տասնվեց հազար հարյուր իննսուն/** ՀՀ դրամը՝ 2015-2017թթ տույժերի գումարը, որը չի վճարվել մինչ օրս:

գ) Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի կողմից տրված տվյալների /հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության ամփոփ ցուցակից քաղվածք/ ք. Էջմիածին, Մաշտոց փող., թիվ 46 հասցեում գտնվող 0,2072 հա մակերեսով ոչ գյուղատնտեսական նշանակության հողատարածքը հանդիսանում է քաղաքացի Տիգրան Աբգարյանի սեփականությունը, ինչը <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է **53 036 /հիսուներեք հազար երեսունվեց/** ՀՀ դրամ, որից **38 826 /երեսունութ հազար ութ հարյուր քսանվեց/** ՀՀ դրամը՝ 2016-2017թթ. ապառքի գումար, իսկ **14 210 /տասնչորս հազար երկու հարյուր տաս/** ՀՀ դրամը՝ 2015-2017թթ. առաջացած տույժերի գումար, որը չի վճարվել մինչ օրս:

դ) Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի կողմից տրված տվյալների /հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող ոչ գյուղատնտեսական նշանակության հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության ամփոփ ցուցակից քաղվածք/ ք. Էջմիածին, Մեխակյան փող., թիվ 36 հասցեում գտնվող 0,051 հա մակերեսով ոչ գյուղատնտեսական նշանակության հողատարածքը հանդիսանում է քաղաքացի Տիգրան Աբգարյանի սեփականությունը, ինչը <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է **9 871 /ինը հազար ութ հարյուր յոթանասունմեկ/** ՀՀ դրամ, որից **6 372 /վեց հազար երեք հարյուր յոթանասուներկու/** ՀՀ դրամը՝ 2016-2017թթ. ապառքի գումար, իսկ **3 499 /երեք հազար չորս հարյուր իննսունինը/** ՀՀ դրամը՝ 2015-2017թթ. առաջացած տույժերի գումար, որը չի վճարվել մինչ օրս:

ե) Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի կողմից տրված տվյալների /հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության ամփոփ ցուցակից քաղվածք ք. Էջմիածին, Պետ. տնկարան հասցեում գտնվող 0,145 հա մակերեսով հողամասը՝ / գյուղ.նշանակության/ հանդիսանում է քաղաքացի Տիգրան Աբգարյանի սեփականությունը, ինչը <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է **155 /մեկ հարյուր հիսունհինգ/** ՀՀ դրամ, որից 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամ գումարը 2016-2017թթ. ապառքի գումար, իսկ 55 /հիսունհինգ/ ՀՀ դրամը՝ 2015-2017թթ. հաշվարկված տույժերի գումար, որը չի վճարվել մինչ օրս:

զ) Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի կողմից տրված տվյալների /հողի հարկով հարկվող օբյեկտ համարվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի հաշվառման ու գնահատման տվյալների վերաբերյալ ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության ամփոփ ցուցակից քաղվածք *ք. Էջմիածին, Պետ. տնկարան հասցեում գտնվող 0,323հա* մակերեսով հողամասը՝ / գյուղ.նշանակության/ հանդիսանում է քաղաքացի Տիգրան Աբգարյանի սեփականությունը, ինչը <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքով հանդիսանում է հարկվող օբյեկտ: Հողամասի համար վճարման ենթակա հարկը կազմում է *343 /երեք հարյուր քառասուներեք/* ՀՀ դրամ, որից *222 /երկու հարյուր քսաներկու/* ՀՀ դրամ գումարը *2016-2017թթ.* ապառքի գումար, իսկ *121 /մեկ հարյուր քսանմեկ/* ՀՀ դրամը՝ 2015-2017թթ. հաշվարկված տույժերի գումար, որը չի վճարվել մինչ օրս:

2018 թվականի սեպտեմբերի 05-ին <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի հիմքով Էջմիածնի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2018 թվականի սեպտեմբերի 14-ին հրավիրվել էին վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է /հիմք փոստային անդորրագիր AG 011518771AM/ քաղաքացի Տիգրան Աբգարյանը:

Վերջինս չնայած <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն պատշաճ ծանուցման վարչական վարույթի անցկացման վայրի և ժամանակի մասին չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի ութերորդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

ՀՀ Հարկային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է միասնական հարկային համակարգ՝ հիմնված հետևյալ սկզբունքների վրա.

խտրականության բացակայություն՝ հարկերի ու վճարների կիրառությունը և հարկային վարչարարությունը չպետք է ունենան խտրական բնույթ՝ կախված սոցիալական, քաղաքական, կրոնական, էթնիկական, գաղափարական, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ սահմանված այլ գործոններից.

համապարտադիրություն՝ բոլոր հարկ վճարողները պարտավոր են Օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում, կարգով և չափով հաշվարկել և վճարել հարկեր ու վճարներ.

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար վերը նշված օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ գույքահարկ վճարողներ են համարվում նաև Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է օրենքի 4-րդ հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույք:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում շենքերը, շինությունները:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13 հոդվածի 2-րդ կետի՝ ֆիզիկական անձինք գույքահարկի գումարը նույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում, տվյալ դեպքում Էջմիածին քաղաքային համայնքի բյուջե, մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ:

Համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված է, որ համաձայն <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի սահմանված կարգով և համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման (գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե

ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

<<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն նույն օրենքը խախտելու համար գույքահարկ վճարողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը:

Համաձայն <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի՝ հողի հարկի գումարը համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի համար վճարվում է հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3րդ և 4-րդ կետերի՝ Էջմիածնի համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը: Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ:

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ ենթակետի՝ համայնքի ղեկավարը սույն օրենքով սահմանված կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

ՀՀ Հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 14 կետի համաձայն, որպես լիազոր մարմին՝ օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ու սահմաններում վարչարարություն կամ հսկողություն իրականացնող՝ հանդես է գալիս պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինը.

Օրենսգրքի 397-րդ հոդվածի համաձայն՝ հարկային իրավախախտում է համարվում հարկ վճարողի կամ հարկային գործակալի հակաիրավական այնպիսի գործողությունը կամ անգործությունը, որի համար Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված է հարկային պատասխանատվություն:

Հարկային պատասխանատվությունը իրավական պատասխանատվության ինքնուրույն տեսակ է, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասի լրիվ ծավալով հատուցման, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով:

Օրենսգրքի 400-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հարկային իրավախախտման համար կիրառվող հարկային պատասխանատվության տեսակներից է տույժը:.

Նույն հոդվածի երրորդ մասի համաձայն՝ տույժի հաշվարկման դեպքում Օրենսգրքի 401-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկվում է լրացուցիչ հարկային պարտավորություն՝ հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու կամ սահմանված ժամկետից ուշ վճարելու յուրաքանչյուր օրվա համար հաստատուն տոկոսադրույքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով, <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 2-րդ, 3-րդ, <<Հողի Հարկի մասին>> ՀՀ օրենքի 1-2-րդ, ՀՀ Հարկային օրենսգրքի, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Քաղաքացի Տիգրան Հրաչիկի Աբգարյանից հօգուտ Էջմիածին համայնքի բյուջեի գանձել՝ 483 552 /չորս հարյուր ութսուներեք հազար հինգ հարյուր հիսուներկու/ ՀՀ դրամ՝ որից 374 447 /երեք հարյուր յոթանասունչորս հազար չորս հարյուր քառասունյոթ/ ՀՀ դրամ, որպես ք. Էջմիածին, Մաշտոց փող., թիվ 46 հասցեում գտնվող անշարժ գույքի գույքահարկ, 45 700 /քառասունհինգ հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ, որպես ք. Էջմիածին, Մեխակյան փող., թիվ 36 հասցեում գտնվող անշարժ գույքի գույքահարկ, 53 036 /հիսուներեք հազար երեսունվեց/ ՀՀ դրամ, որպես ք. Էջմիածին, Մաշտոց փող., թիվ 46 հասցեում գտնվող 0,2072 հա մակերեսով ոչ գյուղատնտեսական նշանակության մակերեսով հողի հարկ, 9 871 /ինը հազար ութ հարյուր յոթանասունմեկ/ ՀՀ դրամ, որպես ք. Էջմիածին, Մեխակյան փող., թիվ 36 հասցեում գտնվող 0,051 հա մակերեսով ոչ գյուղատնտեսական նշանակության մակերեսով հողի հարկ, 155 /մեկ հարյուր հիսունհինգ/ ՀՀ դրամ, որպես ք. Էջմիածին, Պետ. տնկարան հասցեում գտնվող 0,145 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության մակերեսով հողի հարկ և 343 /երեք հարյուր քառասուներեք/ ՀՀ դրամ, որպես ք. Էջմիածին, Պետ. տնկարան հասցեում գտնվող 0,323 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության մակերեսով հողի հարկ:

2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ Էջմիածնի համայնքի ղեկավարին, դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարանին՝ երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով, այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ Հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am-ի կամ քաղաքապետարանի տեղեկագրում հրատարակելու միջոցով:

ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Դ.ԳԱՍՊԱՐՅԱՆ